

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՕԳՈՍՏՈՍ 23

ԹԻԻ 3836

ԿՈՆՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 23 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆԱՅ ՄԵԾ ՅՈՅՑՆ

Ի ՊՐՈՒՍԷԼ

ԱՆՎԵՐՍ, 22 ՕԳՈՍՏ.

Նրկու հետաքրքիր Հայ էինք, Պ. Պոզոս
Չուպուքճեան եւ ես. գացինք ի Պրուսէլ
օգոստոս 15 ին, օրուան մեծ խնդրոյն այս
նոր երեւոյթին ակնատես լինելու։ Փոր-
ձենք սորա մի համառօտ նկարագիրը առ
ձեզ։

Պելճիոյ գործաւորական տաղնապն յայտ-
նի է ձեզ։ Պելճ սահմանադրութեան 47րդ
յօդուածը կը տրամադրէ թէ «Քուէ տա-
լու իրաւունք ունին անոնք որք տարին առ
նուազն 42 ֆրանք 32 սանթիմ, եւ Երա-
կոյտի անգամ լինելու իրաւունք անոնք որք
1,600 Փր. տարեկան տուրք կը վճարեն»։
Արդ Պելճիոյ գործաւորք իրենց տաժանելի
ու գրեթէ անփոխարինելի աշխատութեանց
ու չքաւորութեանց պատճառ հասարա-
կաց գործոց մէջ իրենց ծայնին պահասու-
թիւնը համարելով, կամ ենթադրելով թէ
երեսփոխանութիւնը, կառավարութիւնն եւ
ընտրողք՝ որք միայն հարուստներէ եւ դիւ-
րակեցիկ գասերէն կը բաղկանան՝ միայն ի-
րենց չափուն վերաբերեալ խնդիրներով կը
զբաղին եւ գործաւորաց վիճակին բնաւ
փոյթ չեն տանիր, եւ թէ կ'ուզեն իրաց
ներկայ վիճակէն օգուտ բաղել միշտ գոր-

ծաւորը տարապայման աշխատեցնելով ու ա-
սով իրենց հարստութիւնն աւելցնելով, կ'ո-
րոշեն հուսկուրեմն պահանջել կառավա-
րութենէն իրենց մարդու, բաշտքացիի,
Պելճիացիի քուէի հաւասար իրաւունքներն,
եւ առ այս գործաւորաց մի մեծ ցոյց կը
կարգադրեն յունիս 15 ին մայրաքաղաքին
մէջ աշղի ունենալիք, ձեռամբ գործաւո-
րաց միութեան ընդ հանուր խորհրդոյ, որոյ
կեդրոնատեղին է ի Պրուսէլ։

Այլ Պելճ կառավարութիւնը պատճա-
ռելով թէ 80-100 հազար (այնպէս կը կար-
ծուէր) գործաւորաց միահամուռ մայրաքա-
ղաք դալը, գործադուլներու խռովութեանց
ու արիւնհեղութեանց ապաւորութիւնները
դեռ չը մարած, հանդարտութեան ապա-
հովութիւն մը չէր ընծայեր եւ թէ այդ
ցոյցին հեղինակք իրենք իսկ մեծ իշխանու-
թիւն մը չ'ունէին այդ բաղձաթիւ ամբո-
խին վրայ, արդիւնց այդ ցոյցը։

Այլ Պելճ սահմանադրութիւնը կ'արտօնէ
խաղաղական ամեն ցոյց ու հաւաքում. հե-
տեւաբար գործաւորք իրենց իրաւունքն էր
զուր կը պահանջէին, ուստի որոշեցին յե-
տաձգել զայն օգոստոս 15 ին։ Այս անգամ
կառավարութիւնն յետ երկար խորհրդա-
ծութեանց ու վարանմանց գրեթէ յակա-
մայից արտօնեց, պայմանաւ որ թափօրը
թագաւորին պալատին առջեւէն չ'անցնի։
Ասկից զատ ամէն պատահականութեանց
առջեւ նախազգոյշ կարգ մը միջոցներ ձեռք
առաւ. նախ Պրուսէլի քաղաքապետ զօրքն
ի գէն կոչուեցաւ, Անվէրսի պահակէն եր-
կու հաղարի չափ զօրք Պրուսէլ բերուե-
ցաւ, ձիաւոր ոստիկանաց թիւը կրկնա-
պատկեցաւ, երկաթուղեաց կայարաններուն
մէջ ոչ այնչափ յայտնի պահապան զօրքեր

կեցողեցան, և՛: Պէտք է յիշել աստ ի գո-
վեստ Պեճ ոստիկանութեան թէ այս ընդ-
ամենը 15 - 20 հազար զէնքի տակ պատ-
րաստ գտնուող զինուորական զօրութենէն
բաղաքացւոց աչքին առջեւ բնաւ երեւոյթ-
մը չը կար, ամենքն ալ մերձաւոր զօրանոց-
ներուն մէջ զետեղուած էին եւ աչքի զար-
նող կամ ցուցարարները զրգուելու բնու-
թիւն ունեցող ո՛ր եւ է բան թողուած չէր:
Միայն սովորականին պէս հետի ոստիկա-
նութիւնն իր քաղաքավար լեզուով, « Պա-
րոններ, քիչ մը ետեւօք, եթէ կը հաճիք »,
կը հրաւիրէր բազմութիւնը ճամբայ բա-
նալ:

Ժամ ութն ու կէսէն (Ը. Ե.) սկսեալ Պե-
ճիոյ այլ եւ այլ գաւառներէն երկաթուղ-
եաց կառաչարները կը հասնէին ի ցուցա-
րարներով: Քաղաքապետաց արտօնութեամբ
երկաթուղեաց տնօրէնութիւններն ցոյցի
համար եկող գործաւորաց 50 առ հարիւր
զեղչ մ'ըրած էին պայմանաւ որ օր առաջ ի-
րենց անունն ու բնակութիւնն արձանա-
գրել տան երկաթուղեաց զիւաններուն մէջ:
Հակառակ այսմ բազում գործաւորք այդ
կէս գիւնն ալ չը կարենալ վճարելուն մեր-
ժուած էին: Շատեր ալ գիշերն ի բուն
ոտքով քալելով եկած էին ցոյցին մասնա-
կցելու: Սոքա ամենքն իրենց կուրծքին վը-
րայ կը կրէին կարմիր ժապուհնակապ եւ
իրենց մորթակին վրայ սպիտակ թղթէ ե-
րիզ վը, վրան գրուած « Ընդհանուր ներո-
ղութիւն » . իւրաքանչիւր գաւառ այլ եւ
այլ գոյներով իր գաւառային խոշոր դօշն
ունէր, վրան գրուած գաշնակցութիւն (այս
ինչ գաւառի): Ասոնց մէջ դիտելի էր Շառ-
ռուայի դօշն բողբոլին սեւ շղարչէ, վրան
մէկ բառ միայն գրուած, « Արդարութիւն »:
Այս սեւ դօշ կը նշանակէր նոյն գաւառին
մէջ վերջերս տեղի ունեցած գործաւորա-
կան խռովութեանց առթիւ սպանեալ ու
դատապարտեալ դժբաղդներու սուգը: Ա-
սոնցմէ զատ իւրաքանչիւր գաւառային գաշ-
նակցութիւնք ստորաբաժանեալ էին քսա-
նէն երեսուն այլ եւ այլ ընկերութեանց եւ
արուեստից գործաւորաց . զորօրինակ, ած-
խագործք, մեքենագործք, տպագրիչք, ա-
պակեգործք, և՛, իւրաքանչիւրն ունենալով
իր մասնաւոր կարմիր դօշն եւ նուագա-
ծուաց խումբն որք իրենցմէ amateur ներ

էին: Ոմանք յեղափոխական կարմիր գդակ
կը կրեն, խել մը ձողերու վրայ երկրագունտ,
ու վրան յեղափոխական փուլգական կար-
միր գդակ անցուցած են: Ասոնցմէ զատ
կան նաեւ բազում կարմիր դօշակներ այլ
եւ այլ արձանագրութեամբ, զորօրինակ,
« Անկցի՛ ընտրական մենաշնորհն » . « Անկ-
ցի՛ 47րդ յօդուածն » . « Ընդհանուր բուհ-
արկութիւն կ'ուզենք » . « Զի՛ք պարտք ա-
ռանց իրաւանց » . « Մեր իրաւունքները
կ'ուզենք » . « Հաւասարութիւն քաղաքաց-
եաց » . « Քուէի իրաւունք » . « Կեցցէ Օս-
բար Ֆայտէօն*) »:

Այս այլ եւ այլ խումբերը դօշ պար-
զած, մարտէյայէզ երգելով ու նուագածու-
թեամբ կը դիմեն ի մեծ ծառուղիներն Ալէ
Վէնթ եւ Պուլվար տ'Անվէրս, ուր պիտի
կազմաւորին ի մեծ թափօր . իւրաքանչիւր
գաւառ այբուբէնական կարգաւ . էն ա-
ռաջ Անվէրսի գաւառ, յետոյ Պարպանթ,
Կանթ, Լիէժ և՛, ըստ կարգին: Առ այս
կարգադիր մասնաւոր փոխաւոր կան կար-
գուած որք գլխարկներն վրայ կարմիր թուղ-
թեր կը կրեն « Քօմիսէն » գրուած: Ար-
գէն իսկ պատրաստ են, ութնական հոգի
ըովէ ըով զինուորական երկար կարգ մը կը
կազմեն:

Ճիշդ կէս օրին թափօրը կ'սկսի քալել
ամենայն կանոնաւորութեամբ եւ հանդար-
տութեամբ, ի գլուխ ունենալով գործաւոր-
աց միութեան ընդհանուր խորհրդոյ ան-
դամքն որոց առջեւէն պարզուած է Պեճիոյ
եռագոյն դօշակը սեւ շղարչով ծածկուած
ի նշան սգոյ: Ահաւասիկ տեսնելու արժանի
է՛ն վսեմ մասն այս հանդիսին: Թափօրը կը
մտնէ Պուլվար տիւ Եօն՝ Պրուսէլի է՛ն
կենդանի վաճառաշահ ու փառաւոր փո-
ղոցն որ շարունակելով գրեթէ Պրուսէլն
երկուքի կը հատանէ կեդրոնէն . թրամվէյ-

*) Օսբար Ֆայտէօր եւ Քասպիէ Շմիտ դեռ երեք
օր առաջ այսինքն օգոստոս 12ին Մօնսի բարձրա-
գոյն դատարանէն քսանամեայ շղթայակապ աշխա-
տութեան դատապարտուած էին իբրեւ գրգռիչ
հրճութեան եւ աւարաբուծեան ապակող գործա-
րանին Պ. Պօտուի: Եւ ուրիշներ աստիճանաբար ա-
ւելի նուագ պատիժներու: Ուստի գրեթէ ամեն ցու-
ցաբարաց խնդրած ընդհանուր ներողութիւնն այս
դատապարտելը համար էր:

ներու շրջագայութիւնքն կը դադրին, ծովացեալ անհուն բազմութիւն մը այս լայն ու երկայն փողոցը կը ընու, տանց պատուհաններէն, պատշգամբներէն եւ ճամբու երկու քովի ժողովուրդէն տեղ տեղ կեցցէնէր կը պօռան, կանանց սպիտակ և արանց սեւ գլխարկներն յօդս կը ծածանին, կարմիր դրօշակներն կը բարձրանան ու կը պարզուին, խմբերու երաժշտութիւնը, թմբուկներն ու փողերն ու ժողին կը հնչեն, եւ ցուցարարք Մարտէյյէզն կ'երգեն . . . կ'երգեն կ'ըսեմ, ստուգիւ չը գիտեմ թէ այս ամբոխին բերնին մէջ Մարտէյյէզն ե՞րգ մ'էր չէ թէ զապուած զայրոյթի մը որոտագին մրմունջն . . . Մեզ ի՞նչ փոյթ . այլ սա միայն ստոյգ է որ այս մարդերու հասանքը պարզ անցը մը, պարզ թափօր մը չէր . ընկերական մեծ խնդրոյն, հացի խընդրոյն մի սոսկալի երեւոյթն է : Անտարբեր չէ կարելի դիտել մարդերու այս անագին զանգուածն, ամենքն ալ նիհար, գունատ, չքաւորութենէ սպառած, աչերն անկէնդան, դէմքերն անժպիտ ու լուրջ, շատերն գործաւորի կապոյտ շապիկն հագած, շատերն հանքերու մէջ ստացած վէրքերուն սպիներն երեսնուն վրայ կրող, ոչ մէկ երկայն գլխարկ կը տեսնուի այլ ամենքն ալ հագուած մաքուր, կոկիկ այլ աղքատիկ : Սոցա կարգերուն մէջ շատ մը կիներ ալ կան որք իրենց որդւոց ու ամուսիններուն հետ քով քովի կը քալեն, կուրծքերնուն վրայ կրելով իրենց կամաց յայտարար թուղթերն :

Այլ կիներ յարգելի երեւոյթով կարմիր դրօշակներու ծայրերէն բռնած են, մի այլ կին ջլապինդ բազկօք դրօշակ մը կը կրէ կարմիր :

Ջրկիրուհիներ ալ կան, տեսակ մը դըթութեան քոյրեր որք սպիտակ գլխանոց և գոգնոց կապած փողբիկ տակառներով ջուր կը մատուակեն :

Թափօրը կը շարունակէ իր անցքը որ այսպէս կը տեսէ հինգ քառորդ ժամ . իր երկայնութիւնն է երկու քիլոմետր, թիւն է տասն և հինգէն քսան հազար անձ : Կանցնի Պուլվառ տիւ Նօն, Անսաք, Հէնօ, Միտի, Վաթէրօ, Րէժան պուլվարներէն եւ կը հասնի Ռիւ տը լա Լուա : Այս փողոցի մէջ

են կառավարութեան բոլոր պաշտօնատունները քով քովի : Հոն է նաեւ նորաչէն խորհրդարանն : Այս պաշտօնատանց դէմը կայ մի մեծ հասարակաց դարաստան զոր զգուշութեան համար այսօր գոցած եւ մէջն ալ քաղաքապահ զօրքեր կեցուցած էին : Այս սրբոցիկին միւս դէմը կը գտնուի թագաւորին պալատն : Թափօրը կ'անցնի այս պաշտօնատանց եւ գոց պարտէզին մէջ տեղէն միշտ հանդարտութեամբ, միշտ Մարտէյյէզ երգելով, միայն տեղ տեղ ձայներ կը լսուին « Կեցցէ՛ հանրապետութիւն » :

Ցուցարարք նախապէս ծանուցեալ այս շրջանն աւարտելով կը հասնին Կառ տիւ Նօն ուր կ'սկսին ցրուիլ եւ իւրաքանչիւրն իր գաւառին երկաթուղւոյ կայարանն ուղղուիլ :

Օրուան խաղաղութիւնն չը վրդովիւր հակառակ այնչափ անտեղի երկիւղներու եւ Պեճիոյ ժողովուրդն միանգամ եւս կը հաստատէ թէ արժանի է այն անսահման ազատութեան զոր կը վայելէ իր օրէնքներով եւ սահմանադրութեամբ : Անշուշտ « անսահման ազատութիւն » բառերը ոչեք չէ իմանալ իրենց իմաստասիրական առումը, այլ սա թէ միապետական երկրի մը մէջ, կղերական պահպանողական պաշտօնէութեան մ'օրով և ընկերվարական աղէտքներէ տագնապով դրացի մեծ տէրութեանց մ'ջ տեղը, ազատ ասպարէզ տալ դաս մը ընկերվարականաց որ յեղափոխական կարմիր դրօշակներ պարզած, Մարտէյյէզ երգելով և կեցցէ՛ հանրապետութիւն կանչելով փողոցները շրջին, ցոյցեր ընեն եւ խաղաղութիւնը բնաւ չը վրդովի, ասի նախանձելի վիճակ մ'է : Մանաւանդ երբ մտածենք թէ իր հզօր դրացւոյն, Գերմանիոյ մէջ, ընկերվարականաց դէմ եղած օրէնքին ոյժով Պէրլինի ոստիկանութիւնն ապրիլ մէկէն ի վեր 34 ժողովներ լուծած, 80 գումարում արգիլած, 12 ընկերութիւն խափանած և 10 հոգի ալ աքսորած է : Դեռ եւս ո՞րչափ հզօր ու մեծ երկիրներ կան ուր քաղաքական կամ ընկերական ցոյցեր ընելու մտածումն անգամ ոճիր համարուած է :

Չը մոռնանք յիշել թէ գործաւորաց միութեան ընդհ. խորհուրդը գաւառական ճիւղերու հաւանութեամբ որոշուած մի ուղերձ

զրկած էր օգոստոս 15-ին, այսինքն ցոյցի օրուան առաւօտուն, Պեւճիոյ նախարարաց խորհրդոյ նախագահ Պ. Պէռնաէնի, մատուցանելի առ Խորհրդարանն, որոյ մէջ սահմանադրութեան 47րդ յօդուածին վերաբնութիւնը կը պահանջէր, հիմնելով թէ «գործաւորաց թշուառութեան նկատմամբ կառավարողը բան մը չեն րրած, և թէ պէտք է գործաւորաց այլոց հաւասար ընտրական իրաւունք տալ եւ զայս մերժելն երկրին ազէտալի հետեւանքներ տեղացող տաղնապներ հրաւիրել էր» :

Ահաւասիկ Պեւճիոյ մէջ այժմ հանդիսապէս դիւանի վրայ կը դրուի ընդհանուր քուէարկութեան խնդիրն : Բայց առանց մեծ յայտի մը : Խորհրդարանին ո՛չ քառասունի չափ ազատականներն եւ ո՛չ ալ կղերականաց ջախջախիչ մեծամասնութիւնը բնաւ տրամադիր չեն այդ խնդիրը քուէարկելու, վախճալով որ աղով իրաց հաստատեալ կարգերը կը վրդովին :

Ասիկա դիտեն և ընկերվարականք. ուստի այժմէն կը յայտարարեն իրենց ապագային հետեւելիք ուղղութիւնն. կ'ըսեն թէ գալ տարուան Պէնաէկոստէին մի աւելի մեծ ցոյց պիտի կատարեն. եթէ այդ ալ չը յաջողի, գործաւորաց ընդհանուր գործադուլ պիտի ընեն մինչեւ երեք ամիս : Այսպիսի երկարատեւ գործադուլով Պեւճիոյ գործարանատէրերը կը կործանին, կ'ըսեն : Իրենք ալ այս գործադուլի միջոցին ապրելու համար համադրծական ընկերութիւններ պիտի կազմեն, եւ եւ : Եւ յետոյ օրինական ամեն միջոց սպառելէ ետք ապագայի պատահականութեանց պատասխանատուութիւնն պիտի ծանրանայ այժմու տիրող դատուց վրայ, կ'ըսեն :

Ով որ ապրի պիտի տեսնէ :

ՅՐ. ՄԻՍՍԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ

ՅԱՐԳՈՒՆԻՍ ՌՈՒՍՍՅ

ԲԵՐԱ, 13 Օգոստոս

Պատ. Խմբագրութիւն Մասիս շաբաթաթերթի :

Ձեռքս անցնելով Ամենայն Հայոց երջանկայիշատակ Հայրապետ Տ. Ներսէս Ե. Կաթողիկոսի մի Կոնդակին, յօժարութեամբ կը հաղորդեմ զայն բանասիրաց Ազգիս Ձեր պատուական շաբաթաթերթին միջոցաւ, որպէս զի լինի նիւթ լիակատար կենսագրութեան մեծահոգակ Հայրապետին :

Ինչ որ իմաստուն ծերունին Հայր Գարբիէլ Պատկանեան դրած է, խիստ համառօտ է, և ինչ որ Պ. Աղեքսանդր Երիցեանց հրատարակեց աւելի ճոխ տեղեկութեամբ, դարձեալ ամբողջ կենսագրութիւնը չեն կազմեր. տակաւին շատ մանրամասնութիւնք կը պակսին, զորս մարթ է լեցունել նոյն ինքն հոգեւոյս Հայրապետին զանազան ժամանակ դրած նամակներովն ու կողակներովն :

Ուստի ցանկալի է որ այս տեսակ գրութիւնք, ո՛ւր տեղ, եւ ո՛ւմ մօտ որ կը գտնուին, առանց զանցառութեան հրատարակութեան տրուին, որպէս զի մի օր ամբողջանայ այսպիսի ազգաշահ Հայրապետի կենաց եւ գործոց պատմութիւնն ի յիշատակ և յօրինակ ապագայից :

Մնամ ողջունիւ սիրոյ

Աղթարար ծառայ Ազգիս

ՅՈՎՀ. ՔՉ. ՄԿՐԵԱՆ

Պ Ա Տ Ճ Է Ն

ՆԵՐՍԷՍ ծառայ Գրիստոսի եւ անհատանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ Կաթողիկոս աշենայն Հայոց եւ Պատրիարք Արարտեան գերագահ Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի :

Սինհոգոսի Սրբոյ Էջմիածնի Գրիգոր-

եան *) Հայոց, բազմապատիկ մխիթարութեամբ իմում հոգւոյ ծանուցանեմ, զի յետ չորեքամեայ իմում մահապառնակ հիւանդութեանց, շնորհօքն Աստուծոյ արժանի գտայ ի 28 անցեալ ամեանն ներկայանալ իւրոյ Կայսերական Մեծութեան յաւուր կիւրակէի ի լրման երկոտասան ժամու կէս-

*) Զարմանալի է զի խորիմաստ Հայրապետ մի Հայոց որսիսի է Ներսէս Ե. « Գրիգորեան » բառը կը գործածէ վասն Հայոց, հետեւելով Ռուսաց սովորութեան՝ որ սխալ է աններելի. եւ այդ սխալն ցաւալի է որ տակաւին կը շարունակուի նոյն իսկ Էջմիածնի պաշտօնական թղթոց վերայ գրուելով « Սինոդ Լուսաւորչեան Հայոց » բառերն :

Հայոց Ազգի եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ համար՝ ո՛չ Գրիգորեան եւ ո՛չ Լուսաւորչեան կամ Լուսաւորչական անուններն արժան է յաւելուլ իսկ պապական Հայոց զմեզ Էջմիածնական նորահնար ածականով անուանելը՝ բոլորովին չարամիտ պարսաւանք է, եւ չնմանիր երբէք Հռոմէական կոչման, զի լատին եկեղեցին ընդունած է զայն իւր վերայ : Հայ Ազգն ու Եկեղեցին՝ նոյն Հայաստանեայց Եկեղեցին է՝ որպէս էր յառաջ քան զՍ. Գրիգոր Լուսաւորիչ մինչեւ Թադէոս եւ Բարթողիմէոս Առաքելներն, եւ անտի մինչեւ ցայսօր : Նոքա որ այս Եկեղեցիէն կը բաժնուին՝ իւրեանց վերայ նոր անուն կ'դրենուն, Պապական կամ Հռոմէական, Յուսափառական կամ Հայ-Հոռոմ, Բողոքական կամ Բրոթէսթանդ եւ. ուստի հարկ չմնար մեզ համար նոր անուն ստեղծել, եւ կամ բացայայտիչ անուն տալ մեզ. « Հայաստանեայց եկեղեցի » հին անունը բաւական է բացատրել թէ Ս. Լուսաւորչի վերանորոգած Առաքելական Եկեղեցին է : Այս ծանօթութիւնս տուողն՝ երբ Կ. Պօլսոյ Պատրիարքական փոխանորդ էր՝ առաջին տարին (1870) մի մեծ Տէրութեան դեսպանէ ի Պատրիարքարան ղրկուած նամակի մը վրայ « Գրիգորեան Հայոց » գրուած լինելուն համար յետս դարձուց, եւ միայն Պատրիարքարան Հայոց անուամբ ընդունեց . . . :

Յ. Ք. Մ.

օրէի, եւ վայելել զմեծ շնորհ աստուածաշնան մարդասիրութեանց Նորին, զորոց նշանակեալ համառօտիւ՝ առիթ համադրական մխիթարութեանց եւ արդիւնաւորիչ հարուստ ուրախութեանց սրտից ամենեցուն նոցա համարիմ :

Ի ժամանեին իմ ընդ Նորուն Գերազանցութեան գերազանձ հարազատի Ամենաուրբ Առաջելական Եկեղեցւոյ եւ իմ, Խաչատուր Յովակիմեան Լազարեանց ի պալատն Կայսերական, անդէն ի Սրահի ներքնայարկին բարձրաբերձ պալատան՝ ուստի սկսանի աստիճան սա՛ դիտողն ի բառայարկ վերնատունն, գտաք նախապատրաստեալ անդէն բազլաւոր աթոռ մախմուրաւոր՝ պնդեալ ի միջի երկուց ճախարակեայ ըմբռնատեղաց կամ լծակաց, եւ առ նովաւ չորք անձինք կանգուն՝ որք հրաւիրեցին զմեզ նստիլ ի վերայ այնմ աթոռոց. եւ ես ո՛չ յօժարեալ նստիլ, ասացին նոքա թէ Կայսրն է հրամայեալ : Յորժամ հարկադրեալ գտայ նստիլ. եւ արք երկու բարձեալ ի վերայ ձեռաց իւրեանց իբրեւ 140 աստիճանօք հանին զմեզ ի չորրորդ վերնայարկն կայսերական, ուր ընդ յառաջ ելեալ աստիճանաւոր ոմն, հրաւիրեաց զմեզ ի սենեակն առաջին, ուրանօր յամեռ 8 կամ 7 բոպէ, եւ ի կայսերական սենեկաց պօլկովնիկ ոմն, հրաւիրեաց զմեզ յեկրորդ սենեակն, ուր բացեալ լինի մի գունն կայսերական առանձնարանի (կապիւնէյի), ասաց թէ՛ Կայսրն հրամայեալ է յայսմ սենեկի նստիլ մինչեւ ցզալն իւր յեկեղեցւոյ. ուր նստեալ փոքր մի՝ մի ոմն ի պաշտօնակալաց բացեալ զգունն առանձնարանի սենեկին (կապիւնէյի) կայսերական, ասաց թէ՛ Կայսրն խնդրէ զմեզ :

Յորժամ յառաջեալ իմ տեսի մերձ ի դռուն՝ կանգնեալ ինքն Կայսրն. և մտեալ իմ ընդ դռուն երկրպագեալ նախ՝ ապա աջակնքեալ զանձն Նորա ասելով բարձրաձայն ուսերէն. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, յառաջ մատուցեալ կալայ զձեռանէ Նորա, եւ համբուրեցաք ես զձեռն Նորա՝ եւ Նա զիմն. եւ իսկոյն հրամայեաց նստիլ ի վերայ աթոռոյ, եւ ես ոչ կամեցեալ նստիլ, ինքն կալեալ զբազուկ իմ նստոյց ի վերայ աթոռոյ : Եւ ինքն կոցեալ կանգուն իբրեւ բոպէ մի կամ երկու,

նստաւ ապա ընդ ձախմէ խմէ . եւ սկսաւ ապա հեղաշունչ հարցաբանութեամբ լսել : նախ՝ վասն խնում տկարութեանց, վասն որպիսութեան անձնական խնոյ զօրութեանց, եւ վասն այնքան զօրեղ ցաւակրութեանց, վասն որպիսութեանց Աթոռոյն Էջմիածնի եւ այնց կողմանց, վասն որպիսութեանց ընդհանուր ազգիս Հայոց, վասն Հռովմէական Հայոց, եւ առաւելագէտ վասն հոգեւնական յաղագս ամբառնալոյ զհոգեւորականս Հայոց ի վայելչական դրութիւն գիտնական ազգաչափ հոգեւորականութեանց . վասն ջանալոյ յաղագս պաշտամանութեան ազգական միաբանութեան, եւ վասն կարճեւր զվնասն Հռովմէական քարոզչաց ազգի եւ եկեղեցւոյ մերոյ, եւ վասն յուսադրութեանց իւրոց յաղագս հարկաւորացն վերաբերելոց իւրումն ձեռնկալութեանց :

Եւ ըստ որում բան բազմաց շտեմարանեալ գտանիւր ի մօի իմում, թէ չէ սիրելի իւրումն Կայսերական Մեծութեան՝ երկար բանախօսութիւն ներկայացելոցն ինքեան, թէպէտ եւ նկատէի ընդ իս խօսակցութիւն նորա անհամաձայն այնօրինակ խոցլոց, եւ ընդհակառակն յօժարակամ առաւել ասել եւ լսել . այնու ամենայնիւ՝ յաղագս ոչ լռեալ գոլոյ իմ, թէ յընկալնուն Կայսեր զեկաւորսն՝ օրէնք են սպասել եկաւորին, մինչեւ ինքն Կայսրն յարիցէ, եւ թէ իցէ նստեալ . իսկ եթէ կանգուն իցէ յընկալնուն, Կայսրն ինքնին ունիցի աւարտ տալ իւրումն առարկութեանց եւ մեկնիլ : Եւ առաւել տպաւորեալ ունելով զբան բազմացն, որպէս զի ոչ ձանձրացուցից առաւել՝ յարեայ յաթոռոյ խմէ, յորժամ եւ ինքն Կայսրն յարուցեալ յերկարեաց ի վերայ ոտից զայլս յուսադրականս :

Եւ ի հատուածել Նորա յայնմ, յառաջ մատուցեալ կալայ զձեռնանէ Նորա զի համբուրեցից, այլ ոչ կամեցաւ տալ, յորժամ եւ զուարթ ձայնարկութեամբ ասացի ուսերէն . « Կալ Տօնոյ Տնէ պօղոսանիկայ Բօթիկի Նէպօյիկէ վարդապետ »*) . զիւրոյ կարելի է ինձ

*) Յօրինակին այսպէս էր գրեալ, բայց ըստ ռուսագիրտաց ուղղելի է .

« Կալ Տօնոյ Տնէ պօղոսանիկայ Բօթիկի Նէպօյիկէ վարդապետ » :

զօժելոյն Աստուծոյ ոչ համբուրել զձեռն . եւ լռեալ զայս թոյլ ետ, եւ ես համբուրեալ զձեռն Նորա, եւ խոնարհեալ զգլուխ իմ, ելի յառանձնարանէ անտի, յորժամ եւս նստուցեալ ի վերայ այնմ աթոռոյ՝ որով հանին զմեզ ի վեր, իջուցին ի վայր :

Եւ ինքնին Կայսրն գնացեալ ուղղակի ի մեծ սենեակն (զալայն), ուր համագումարեալ գտանէին բազմութիւնք մինիսդրաց եւ այլ աստիճանաւորաց, եւ անցեալ ի միջոյ ամենեցուն նոցա, զնաց առ Մինիսդրն Ներքին գործոց որ գտանի կացեալ ի վերջոյ ամենեցուն ըստ իւրումն խոհական արժանադատութեանց, եւ յոյժ զուարթութեամբ սրտի իւրոյ շնորհակալ լինի նմա՝ յաղագս զմեզ ընտրելոյ եւ հաստատելոյ . եւ յետ բազում բանից յաղագս բաւարարութեանց իւրոց զմէնջ՝ յաւելու ասել, թէ ի բազում ժամանակաց հետէ այսպիսի աստիճան « Առաւելեցիայ » որ նշանակէ յընկալնունն նորոգ եկաւորաց՝ չեմ ունեցեալ ես որպիսի ունեցայ այժմ ընկալմամբ Պատրիարքին :

Եւ վերադարձեալ ի Մինիսդրէ Ներսնային գործոց, մի առ մի բազմաց Մինիսդրոց յայտնէ զայնպիսի իւր բերկրասրտութիւնն, եւ արձակմամբ ամենայն ժողովելոցն յայնմ ժողովարարի, իսկոյն զնացեալ առ Կայսրուհին, նմա եւս պատմէ զայն, զայնպիսի զուարթութիւն մտաց եւ սրտի իւրոյ : Եւ վերագոյն քան զամենայն զգալի ինքեան եւ ինձ այն է, զի ի վերայ ամենայն բանից իւրոց յաղագս այսպիսի իւրոց զուարթամտութեանց, յաւելու ասել . « Աւա՛ղ, զի զուր կորուսեալ եմ զամս քսան (20) վնասուք մերում՝ կառավարութեան այնոցիկ կողմանց եւ Աթոռոյն Էջմիածնի » : Որովք այսօրիւք այո՛ւ այո՛ւ՝ իսկական զրօսանք զտեղի կալան յիմում սրտի, ոչ յաղագս այնր զի Կայսրն յայտնեցաւ ինքնին գովաբան իմում տպարդիւն անձին, այլ զի ամբաստանն վասն իմում վնասապարտութեանց՝ գտանի այժմ ամօթ ապարտ :

Եւ մեք մաղթեսցուք ի մարդասիրութեանց Տեառն Աստուծոյ մերոյ, զի որ ունի ի ձեռն զսիրտ թաղաւորաց՝ դարձուցէ զայն մշտնջենաւոր խնամակալութեամբ առ մշտադուրկ յամենայն բարե-

մասնութեանց Ազգ մեր եւ Եկեղեցի . Ա-
մէն :

Ի 4 դեկտեմբերի յաւուր շաբաթու ներ-
կայացայ Կայսրուհւոյն ի 12 ժամու կէսո-
րէի , որ եւս ընկալաւ զմեզ նմանօրինակ
իւրումն կենակցի , առաւելագատիկ մար-
դասիրութեամբ , ընդ որում և երեք դասերը
նորուն :

Եւ ի 5 նորին աւուր կիւրակէի ներկա-
յացաւ Մեծ Կնիազ Միքայէլ Պաւլովչին ,
յերրորդ ժամու յետ կէսօրէի . եւ ելեալ ի
նմանէ ներկայացաւ կենակցի նորին Մեծ
Կնիազինէ Էլինէ Պաւլովչայի , որոց կայսե-
րական Բարձրութիւնք եւս ընկալան զմեզ
զուգահաւասար տխորժ հիւրընկալութեամբ ,
առաւել յոյժ քան որքան մարթ էր մեզ յու-
սալ . եւ յուսամ թէ չնորձօքն Աստուծոյ ի
միւս անգամ ներկայանալն մեր , որպէս ինքն
յուսադրեաց , առաւել եւս վայելեացուր
զչնորհ աստուածանման մարդասիրութեանց
Նորա :

Եպիսկոպոսապետ Կաթողիկոս
և Պատրիարք ամենայն Հայոց

ՆԵՐՍԷՍ

Համար 8. 1845 դեկտ .

Ի Ս. Պետրբուրկ



ԱՆՀԵՏԱՑԱԾ ՍԵՐՈՒՆԴ ՄԸ

Մ Ս Ս Ն Բ .

ՍՈՌԱՅՈՒՍ

(Շար . նախորդ թուէն)

Պարահանդէսի գիշերն է :

Արտակարգ ոգեւորութիւն կայ Պէօյիւր
-Տէրէյի ախունքը : Պարտէզն անհամար քա-
հերով ու լոյսերով կը փայլի ընդարձակ ամ-
փիթատրոնի մը նման . բազմութիւնն ամէն
կողմէ հետզհետէ կը հասնի ու երաժշտու-
թիւնն իր եռանդուն ձայնը կը լսեցնէ : Մէկ
նայուածքով կրնաս հոն նշմարել ամէնէն

բարձրագիւր Հայերն իրենց ընտանեաց հետ
միասին , պարի վայրն ամէն կողմ լեցուն է :

Ծառի մը տակ երիտասարդ մը ու ման-
կամարդ կին մը կը խօսակցին :

— Տիկին , կ'ըսէ երիտասարդը ձեռքերն
աղաչաւոր դիրքով մը միացուցած , գիտէք
որ շատոնց ի վեր կարօտ ու զուրկ թողու-
ցիք զիս ձեր տեսութենէն . ափսոս , առջի
օրուինէ գուշակցի իմ բաղդս , բայց չի
կրցայ մէկդի ընել զայն . տարիէ մը ի վեր
հոս , հոս միայն հանդիպեցայ ձեզի :

— Թողէք զիս , կ'աղաչեմ , կը պատաս-
խանէր կինն , այս տեղ առանձին մնալնիս
վայելուչ չ'է , ամուսինս կրնայ գալ . . . :

— Ատեն մը այդ պէս չ'էիր խօսեր ինձ
հետ , Եւգինէ , կը կրկնէր երիտասարդն ,
ամուսինդ չ'է . թէ ուրիշ մը :

— Արմենա'կ , գոչեց կինը . բարկու-
թեամբ :

— Թող չ'եմ տար զքեզ այս գիշեր , կ'ու-
զէ Վառեմեան գայ կ'ուզէ Մարեմեան : Իմ
իրաւունքս աւելի հին է :

— Ամուսնոյս ըով : տար զիս , ապա թէ
ոչ բաշուէ :

— Ես այդ տեսակ բան չ'եմ գիտեր . ու
այս ըսելով երիտասարդը նորաւի կինը գրե-
կելու ու համբուրելու կ'աշխատէր :

Եւգինէի համբուրութիւնն սպառեցաւ :

— Անդին գնա , հիմա պիտի պոռամ :

— Համբարով մը բերանդ կը գոցեմ :

Կինը ճիշ մ'արձակեց :

Երիտասարդ մը , որ այն կողմէն կ'անց-
նէր , մօտեցաւ . Արմենակ մէկդի քաշուե-
ցաւ , մինչդեռ կինը շուարած ու զայրացած
գոչեց .

— Ազատեցէ՛ք զիս սա անպիտանին ձեռ-
քէն :

Տիգրանն էր մօտեցողը . տեսաւ ու ըմ-
բռնեց տեղի ունեցած տեսարանն :

— Ուրիշ տեղ մը տարձեր կերպով պի-
տի վարուէի ձեզ հետ , հոս զձեզ վաճառել
տալով պիտի բաւականանամ :

Եւ այն միջոցին անցնող հիւրամեծարի
մը միջոցաւ դուրս ընել տուաւ և Եւգինէն
թեւն առնելով պարի դաշտը դարձաւ :

Մազուրբա մը կը զարնուէր . աչքով Սուր-
բիկը փնտռեց , տեսաւ որ Խոսրովի հետ
էր : Ինքն ալ Եւգինէի հետ քիչ մը պարել
ուզեց :

Ոչ ոք Եւգինէի չափ քաջ պարող էր . Տիգրանի թեւին վրայ բան մը չի կար ծանրացող, այլ իր երեսին հեշտաւէտ բուրում մը ու իր քովն զմայլիչ հիւր մը որ պարողներու յորձանքին մէջէն իրեն հետ կը սրանար :

Տիգրան բնաւ այնքան հաճոյք չգացած չէր . շրջան մը միայն ընել ուզեր էր ու այն ատեն միայն կեցաւ երբ երաժշտութիւնը դադրեցաւ . անկից վերջը քատրիլ ու յետոյ վալս մը պիտի լինէր ու այս վալսին համար խօսք տղւին իրարու եւ պիւֆէն ուղեւորեցան :

Սուրբիկ հոն էր Խորոզմի թեւը մտած :

Տիգրան անշուշտ իրաւամբ խորհեր էր թէ չարախօս բազմութեան մը մէջ, ուր արդէն տեսակ տեսակ տարածայնութիւններ կը դառնային իր մասին, որքան ալ մաքուր ու անկեղծ լինէր իր սիրտը, պատշաճագոյն էր որ Արամ էֆէնտիի կինը մինչեւ վերջն իրեն հետ ի միասին չի տեսնուէր ու տեղի չի տար նորանոր բամբասանաց :

Ինչէ՛ր չէին ըսեր մինչեւ այն ժամանակ . Տիգրան Սուրբիկի սիրահարն էր . ո՞վ կը տարակուսէր աղբոր . եւ ահա նորասի կիւնն, որ իր հիւանդ ու ծերունի ամուսինը լքանելով վարձկան ձեռքերու, ինք կուգար զբօսանաց վայրերն իր տարփաւորին հետ զուարճանալու : Այս զբաւարտութիւնները պիտի լինէին հետեւեալ օրն ամէն կողմ տարածուելիք արձագանքն ու Տիգրան մեծապէս իրաւունք ունէր իր զգուշաւոր ընթացքին մէջ :

Սուրբիկ միայն Տիգրանի իր մօտը չի գալուն այս բացատրութիւնը չի տուաւ . լուազոյն բացատրութիւնն անոր թեւի գեղանի ու շնորհալի կիւնն էր եւ ուրիշ պատճառ միտուելու հարկ չի տեսաւ :

Դպրոցէն փախչող տղու մը պէս այն իրիկուն Սուրբիկ անպառաւ քերկրութիւն ու խնդում զգացեր էր պարահանդէս գալուն : Ո՛րքան ատենէ ի վեր զուրկ էր մնացեր այս տեսակ հաճոյքներէ, ու ասպետական դղեակի մը տիրուհւոյն պէս առանձին ու մարդէ հեռու ապրեր էր իր քէօզիկն մէջ :

Պահ մը մոռցաւ իր կենաց մտաւախապատ հորիջունն ու ընտանեկան յարկին հոգն ու

մտմտութիւնը պարահանդէսին շողողուն փայլին առջեւ :

Քաջուած ապրելով, իր ծանօթները գըրթէ մոռցեր էր . բայց Տիգրանի ընկերութիւնը կը բաւէր անոր . Սուրբիկ պարելը կը սիրէր, նա մանաւանդ վալսն որ տեսակ մը թաքուն ու անբացատրելի ախորժ ունէր իրեն համար :

Ո՛րչափ մեծ եղաւ իր զարմանքն, երբ պարահանդէս մտած չի մտած, Տիգրան իրմէ բաժնուեցաւ մէկ մ'ալ իր քովը չի գալու համար : Ո՞վ էր այդ Եւգինէն ուսկից երիտասարդը չէր կրնար զատուիլ . մազուրքայի ատեն նշմարել կարծեց թէ Տիգրան խիստ մօտէն կը գրկէր իր վայելչագեղ ընկերուհին :

Սուրբիկ նեղացաւ . ինքն ալ աղէկ մը չէր զիտեր ինչ պատճառաւ մինչեւ այն ժամ երիտասարդն ո՛ր եւ է սիրային խոստովանութիւն մ'ըրած չէր իրեն . թերեւ ինքը նշմարել կարծեր էր անոր ներքին համակրութիւնն ու կ'երեւէր թէ բոլորովին սխալած էր այս ենթացքութեան մէջ :

Սուրբիկ միշտ նոյն դիւրագրգիռ կիւնն էր : Այն գիշեր խմած մէկ երկու քօնեաքն անոր գլխին զարնելու մօտ էր, երբ Տիգրան մօտեցաւ եւ Եւգինէն Խորոզմի յանձեց անոր վալսի խոստումն յիշեցնելով :

Սուրբիկ փոթորիկ մը զգաց իր սրտին մէջ այս խոստումը լսելով . ի՛նչ, այդքան չի կարենալ բաժնուելու չափ ախորժելի մէ՞կն էր այդ մանկամարդ կիւնն եւ մէկ նայուածքով ճանչցաւ անոր վրայ երիտասարդ մը գլխէ հանելու բոլոր առաւելութիւնները :

Իր ներքին խռովութիւնն այնքան աւելի մաստիկ եւ ուժգին եղաւ որքան Տիգրանի չէր կրնար հաղորդուիլ . Կը մտածէր որ իր բարեկամին անկախութեան դպչելու իրաւունք չ'ունէր . նա ազատ էր իր ուզածին հետ պարելու կամ խօսելու . զինքը պարահանդէս բերել խոստացեր ու բերեր էր եւ աղկէ աւելի բան մը չէր կրնար պահանջել անկից :

Ափսո՛ս, մինչեւ այն վայրկեանը Տիգրանը գոնէ իրեն անձնուէր մէկն համարած էր . եւ առաջին առթիւ կը տեսնէր թէ ո՛րքան խաբուած էր իր համոզման մէջ : Իր վերաւորեալ հպարտութիւնն արգիլեց զին-

բըն ո՛ր եւ է բան մը զգացնելէ Տիգրանի .
ի՛նչ օգուտ եթէ իր ստիպման վրայ երի-
տասարդն այդ կնոջ հետ չը պիտի պարէր :

Սուրբիկ՝ այս երկրորդ անգամն ըլլալով՝
կը սխալէր իր դատաստանին մէջ :

Տիգրան յիմարի մը պէս կը սիրէր զինքը :

Արամ էֆէնտիի կինը պարահանդէսին
մէջ դտնուող տիկնանց մէջ թերեւս ամե-
նէն գեղանին էր : Մեծագին չէր անոր
հագուստը՝ պարզ քոճմ կազէ չըփազգեստ մը
հագած էր նա վալանսիէններով շտկուած,
որոյ թափանցիկ ու անգողտնապահ հիւս-
ուածքը՝ մարմարի պէս սպիտակ մարմնոյ մը
բոլոր հեշտալի հրապուրը կը մատնէր : իր
սիրուն գլուխը, դալուկ դէմքը, դիւրաբեկ
հասակն, երազի մէջ երեւցող ու խուսա-
փող տեսիլ մը կը յիշեցնէր զոր կորսնցընե-
լու վախով մարդս կը վախնայ ձեռք գըպ-
ցընելու :

Զմայման ու յափշտակութեան չընեջ
մը կը բարձրանար երիտասարդաց ու պա-
տանեաց մէջ անոր անցած ատեն . ամէնքն
անոր ընկերացող անձին շուրջը կը դառնա-
յին անոր ներկայացուելու, հեաը չըջան
մը ընելու կամ բառ մը փոխանակելու յոյ-
սով, իբրեւ նորատեսակ արքանեակներ՝ ու
րոց այս շողողուն ու հրափռ աստղը ձը-
գողութեան ընդհանուր կեդրոնն էր :

ԳՐԻԴՈՐ ԶՕՀՐԱՊ
(Շարանակէլ)

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՅԵՐԿԻՆՍ ԵՒ ՅԵՐԿՐԻ

ԿԵԱՆՔ ՅԱՅԼ ԱՇԽԱՐՀՍ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՄՈՂՈՐԱԿՆ ՀՐԱՏ

Ա.

(Շար . նախորդ թուէն)

Երբ ուշագրութեամբ կը դիտենք այս
մերձաւոր աշխարհս, չենք կրնար մեր զար-

մանքը բռնել նախ այն նշանաւոր նմանու-
թեանց առջեւ, որը անմիջապէս մտածել
կուտան մեզ մեր երկրաւոր բնակութեան
վրայ : Եւ նախ, այս մոլորակս կ'երեւի մեզ
չըփազանց բաւական թանձր մթնոլորտով
մը, որ կ'ընդունի յինքեան լուսոյ մեծ քա-
նակութիւն մը . իւր աշխարհագրական երե-
ւոյթներն անտեսանելի կ'ըլլան մեզի հա-
մար, երբ հասնելու ըլլան սկաւառակին ե-
զերքը, եւ մեծապէս կը նուազեցնեն իւր
ցամաքաց կարմրութիւնը :

Այս մթնոլորտս կը պարունակէ մեր մըթ-
նոլորտին պէս առկախեալ ջրոյ շոգի . այս
բանս կ'աղացուցանէ մէկ կողմէն երեւու-
թական վերլուծութիւնը, եւ միւս կողմէն
այն բեւեռական ձիւները զորս կը նշմարեմք
աստի, եւ որք տարածութեամբ կը փոփո-
խին ըստ եղանակաց . ո՛չ կրնային ձեւա-
նալ, ո՛չ հալիլ, ո՛չ շոգիանալ, եթէ ջրերն
այս մոլորակի վրայ չը կատարէր մէկ դեր
մը նման այն դերին՝ զոր կը կատարէ մեր
մէտէորաբանութեան մէջ :

Գետնի մակերեւութին բացառոյն եւ
մթագոյն գաւառներու բաժանումը հետեւ-
ցընել կուտայ մեզ միւս կողմէ թէ մթին
գաւառները մեզ կ'ընծայեն ջրոյ տարածու-
թիւններ որ կը լափեն զլոյս, մինչդեռ ցա-
մաք երկիրները կը ցոլացնեն զայնս : Այս ջը-
րոյ տարածութիւնը՝ ինչպէս որ բիշ մը վերջը
սիտի տեսնենք, փոփոխական են ինքնին
ըստ եղանակաց :

Իսկ այս եղանակները մեր եղանակաց
նման ճշգիւ մի եւ նոյն խտութիւնն ու-
նին . վասն զի Հրատի գունդին առանցքին
թաւալման հակումը գրեթէ մեր մոլորակին
հետ մի եւ նոյնն է : Սակայն անոր տարին՝
մեր տարւոյն երկայնութեան կրկնապատիկն
ըլլալով գրեթէ (վասն զի 687 օր կը տեւէ)
իւր եղանակներն ալ հաւասարապէս կրկնա-
պատիկ աւելի երկար են, եւ իւրաքանչիւրը
գրեթէ վեց ամիս կը տեւէ . այսու հան-
դերձ երկրիս եղանակներէն աւելի անհա-
ւասար են : Գարունը կը տեւէ 191 օր . ա-
մառը՝ 181 օր . աշունը՝ 149 օր, եւ ձմե-
ռը՝ 147 . համագումար 668 օր Հրատային
այս մոլորակիս տարւոյն համար : Հրատային
օրը երկրային օրէն բիշ մը աւելի երկար է .
մոլորակին իւր առանցքին բոլորտիքն ըրած
թաւալման ճիշդ տեւողութիւնը ճանչցուած

է այսօր կատարելապէս, որ է 24 ժամ 57 վայրկեան 23 երկվայրկեան :

Ասոր մէջ՝ երկրի վրայ եղած ամպերէն նուազ ամպ կայ : Շատ քիչ ամպեր կը ձեւանան Հասարակածի գաւառաց մէջ, նա մանաւանդ բեւեռական գաւառաց մէջ կը լստանան : Այսու հանդերձ մէկ քանի երկիրներու մէջ, բեւեռական ձիւներուն հետ պայծառութեամբ մրցող սպիտակ բիծերուն երեւումը, անհետին եւ տեղափոխութիւնը կը նշանակեն մէգերու եւ ամպերու ձեւացումը, որք վերէն նայուելով մեզ կ'երեւին ա'յնպէս, որպէս երբ դիտենք օդապարիկով, փայլուն սպիտակութեամբ : Վասն զի իրենց վերին մակերեւոյթը կը ցրացնէ արեգակնային լոյսը նոր տեղացած ձեան խտութեամբ :

Բեւեռական ձիւներն ընդարձակութեամբ մեծապէս կը տարբերին եղանակաց համեմատ : Ամէն դիտողութիւնը համաձայն կը հաստատեն թէ նոքա կը հասնին իրենց վերջին աստիճանին՝ իրենց կիսագնդին ձմեռէն յետոյ, եւ իրենց փոքր աստիճանին՝ ամառուընէ յետոյ :

Տարածութեան փոփոխութիւնն աւելի մեծ է հարաւային բեւեռին մէջ քան թէ հիւսիսային բեւեռը, և այս կէտս կը համաձայնի ծիր խաւարմանի հեռաւորութեան ազդեցութեան հետ, որ հարաւային կիսագնդին կուտայ հիւսիսային բեւեռէն աւելի նշանաւոր եղանակներ : Ինչպէս որ մեր մոլորակին վրայ ցուրտին կեդրոնը չը համաձայնիր աշխարհագրական բեւեռին հետ, եւ անկէ հեռու է հինգ վեց աստիճանաւ : 1877 և 1879 տարիներուն մէջ մանաւանդ տեսնուեցաւ բեւեռին մէկ միջոց մը բոլորովին բաց մնալը : Ինչպէս որ երկրի վրայ ալ այս բեւեռական գաւառները պաշարեալ և գըրաւեալ են ծովերով :

Սորա եւն այն զլսաւոր նմանութիւնները զորս Հրատ մոլորակը կ'ընծայէ մեր բնական աշխարհին հետ : Ամէն անկողմնակալ ոգւոյ համար՝ որ ազատ է երկրային նախադատումներէ արմատական տրամաբանութիւնը աչքերէն աւելի քիչ մը հեռուն կ'երթայ : Մեր միտքը կը գուշակէ, կ'զգայ, կը նմարէ թէ բնութեան զօրութիւնը չեն կրցած անգործ և ամուլ մնալ մշտնջենաւոր հրաշիւք : Արդարեւ ինչպէս հո'ս, ա'յնպէս ալ հո'ն,

որեր եւ գիշերներ կան, առաւօտ եւ երեկոյ, արեւու ճառագայթներ եւ ստուերներ, լուսաւոր ժամեր եւ ամպամած օրեր, ամպեր եւ անձրեւներ, հողեր եւ ջուրեր, գարուններ եւ ձմեռներ, մրրիկ եւ հանդարտութիւն, գեղեցիկ դաշտեր եւ ամուլ անապատներ :

Ինչպէս հո'ս, ա'յնպէս ալ հո'ն, հովը կը մանչէ ժայռերուն մէջ, կը փչէ անտառաց մէջ տեղէն, կը սողոսկէ ծածանող մարգագետին վրայ : Ինչպէս հո'ս, ա'յնպէս ալ հո'ն, ծիրանի գօտին կը յաջորդէ փոթորկին, ծաղկանց ղուրմուք կը լեցնեն զմթնոլորտ, եւ անշուշտ, հո'ն ալ ինչպէս հո'ս, գարունը կը ճոխացնէ զանտառս բոյներով և երգերով :

Միթէ բնական չէ՞ երեկոյեան այս սիրուն ժամուց վրայ մտածել, որոց համար կը խօսէինք այս աշխատութեան սկիզբը, ժամեր որ կը յաջորդեն միմեանց ինչպէս երկրի նմանապէս Հրատի վրայ : Այնու, կը փայլինք մենք եւս յերկինս, ինչպէս Արուսեակը կը փայլի մեզի համար : Միթէ բնական չէ՞ հարցնել մեզ, թէ արդեօք կա'ն այն տեղ մեզ դիտող էակներ, մարդիկ, եղբայրներ որք գուցէ աւելի լաւ կը ճանչնան մեր հայրենիքը, որչափ մենք չենք ճանչնար իրենցը, մեր հանճարաց նման կամ գերազանց կարողութեամբ օժտեալ էակներ . . . :

Ինչպէս կարելի է դիտել այս ցամաք երկիրները եւ ա'յս ծովերը, առանց մտածելու անոնց բնակչաց վրայ : Ինչպէս կարելի է չը մտածել ա'յդ ծովեզրաց, ա'յդ գետափանց, ա'յդ նաւահանգստաց, դաշտաց եւ գիւղօրէից վրայ, եւ չ'երեւակայել թէ ա'յն տեղերն նաեւ կրնան գըտնուիլ ուղափսներ, առանձնական աւաններ, խաղաղաւէտ գիւղեր, բազմամարդ քաղաքներ, փառաւոր մայրաքաղաքներ, ճարտարագիտական աշխատութիւնք, արհեստական գործեր եւ դարաւոր քաղաքակրթութեան մը ամէն արդիւնքներ : Անշուշտ, եւ հաստատապէս իսկ, կենդանի էակաց ձեւերը պէտք չէ որ նմանին մեր մոլորակի որդւոց ձեւերուն : Սակայն, երկրաւոր յայտնութեանց զանազան յայտնութեանց ներքեւ աստուածային բնութիւնն՝ որ մայր է

էականց եւ իրաց , կեանք տուած է կենդանի էականց : որոնց կազմակերպութիւնը յարմարած է այն օթեւանին մասնաւոր գործարանական պայմանաց :

Բ.

Այս մոլորակիս աշխարհագրական ձեւակերպութիւնը շատ տարբեր է մեր բնական աշխարհի ձեւակերպութենէն : Մինչդեռ մեր երկրագնդին երեք քառորդ մասը ծածկուած է ջրով , եւ ցամաք երկիրը ձեւացած է երեք զլխաւոր ցամաքներով (Ամերիկաներն , Ափրիկէն եւ Ասիան որոնց շարունակութիւնն է Եւրոպան) , Հրաւի վերայ ո՛չ ընդարձակ ովկիանոսներ կան , ո՛չ ալ ցամաքներ , այլ միայն միջերկրականներ , կղզիներ , թերակղզիք , նեղուցք , հրաւանդանք , ծոցեր , անցուկ ջրանցքներ , միով բանիւ , աւելի մանրամասն կտրուածներ : Յամաք երկիրները գրաւած են ծովուց տարածութեան գրեթէ հաւասար տարածութիւն մը , եւ կը բաշխուին մանաւանդ հասարակածի եւ անկէ վարի երկարութեանը :

Երկրաբանական ձեւակերպութիւնը այս տեղի ձեւակերպութեանց նման չ'են , վասն զի հոս կը տեսնենք բոլոր ցամաքները հըրուանդաններով վերջացած դէպի հարաւ : Ծովերուն մասունքը բազմաթիւ եւ ընդհանրապէս նուազ խորին են . վասն զի անոնց յատակը նշմարել կը թուի մարդ մի բանի մասանց մէջ որ աւելի նուազ մթին են եւ միջոց միջոց կ'ենթ արկուին փոփոխութեանց , ողողմանց , տեղատուութեանց որ նշմարելի են աստի . հետեւաբար Հրաւի վրայի ջուրը երկրի վրայի ջուրէն նուազ է :

Իրաց այս վիճակը կը համաձայնի այս մոլորակիս երկրաբանական տարիքին : Վասն զի աշխարհաց՝ նախնական կազային օղակներով կազմութեան ամենէն հաւանական տեսութեան մէջ , օղակներ՝ որ հետզհետէ զատուած են արեգակնային դրութենէն , ամենէն հեռաւոր մոլորակներն ամենէն հիններն են , եւ իրենց ծննդեան կարգն՝ իրենց հեռաւորութեան կարգն է . Պիսիդոն , Ուրանոս , Երեւակ , Լուսնթագ , Հրատ , Երկիր , Արուսեակ , Փայլածու : Իրենց երկրաբանական , մետէորական , կլիմայաբանա-

կան և գործարանական պատմութիւնը կախումն ունի նաեւ իրենց ծաւալէն , զանդուածէն եւ Ֆիզիքական կազմութենէն : Հրատը պէտք է ցրտացած ըլլայ մինչեւ իւր կեդրոնը : Յայտնի է թէ երկրագնդիս ներքին մակերեւութին կենսական երեւոյթներուն վրայ բնաւ ազդեցութիւն մը չ'ունի : Բայց այսու հանդերձ Հրատին երկրաբանական պատմութիւնն երկրի պատմութենէն աւելի արագ եղած չէ . շատ բնական է ընդունիլ թէ ջուրերուն մէկ մասն անհետացած է , թէ ծովերը նուազ մեծ եւ նուազ խորին ըլլան , նուազ շոգիացում եւ նուազ ամպեր քան Երկրի վրայ , և զիտուութեամբ ալ յայտնուածն այս է : Հրատի ծովերն Երկրի ծովերէն նուազ տարածութիւն ունին եւ նուազ խորին են :

Մէկ կողմէն մարդ կը թուի որոշել անոնց յատակն երբեմն շատ ընդարձակ մի բանի գաւառաց մէջ , վասն զի գոյնն այն ծովուց մէջ աւելի բաց է քան թէ ցամաքի վրայ . միւս կողմէն մի բանի ծովեզերքներ միջին հարթութենէն աւելի վեր բարձրացած ըլլալու են , վասն զի մերթ բաց եւ մերթ ողողեալ կ'երեւին . դարձեալ ուրիշ կողմանէ ալ , ցամաք երկիրները մեր Անտիէան եւ Քօրաէլիէն լեռանց նման հսկայական լեռանց գօտիներով ցցուեալ ըլլալու չ'են , վասն զի անոնց մէջէն կ'անցնին ուղղագիծ երկար ջրանցքներ ամէն կողմէ , որպէս թէ մի միայն ընդարձակ մարգագետիններ եւ դաշտեր ըլլային , եւ ծովուց յատակին ցցումը չը կրնար երկրաբանաբար տարբեր ըլլալ ցամաք երկիրներու լեռներէն : Այս զանազան վկայութիւնքս կը միանան մեզ ապացուցանելու Հրատի մէջ Երկրէս , Արուսեակէն եւ Լուսնինէն աւելի նշնազ լեռնոտ մոլորակ մը չըջատատեալ սակաւ խորին ծովերով եւ հարթ հաւասար ու հանդարտ եզերքներով :

Գուցէ յանդուգն թուի երեւակայել թէ մենք կարող ենք ականատես ըլլալ աստի այս մոլորակիս ողողմանց եւ ցամաքութեան ջրոց , այս մոլորակիս՝ որ մեզնէ տասն եւ հինգ քսան միլիոն փարսախս հեռաւորութիւն ունի տեսանելիութեան լաւագոյն պարագայից մէջ : Այս է ահա դիտակին մեզ տուած կարծիքը : Եւ որպէս զի այս փոփոխութիւններս տեսանելի ըլլան , պէտք է

անշուշտ որ լայնածառալ մակերեւոյթներու, գոնէ առ նուազն հարիւր հազարամէթր լայն եւ քանի մը հարիւր հազարամէթր երկայն տարածութեանց վրայ կատարուին: Բայց արդէն շատ տարիներ կան որ այս փոփոխութեանց ուշադրական բաղդատութիւնը մեզ կը ներշնչէ այս բնական բացատրութիւնը:

Հաստատապէս, պէտք չէ իրրեւ իրական փոփոխութիւն համարիլ այն ամէն տարբերութիւններն որ կան դիտողաց մէջ եւ գրեթէ կրնանք ըսել, որ մի քանի մանրամասնութեանց համար չը կայ բնաւ երկու աջք՝ որ մի եւ նոյն նշանակաւ տեսնեն, մինչեւ անգամ մէկ մարդու մը երկու աջքերը: Բայց երբ ուշադրութիւնը մասնաւորապէս հաստատուի մի քանի նշանաւոր կէտերու վրայ՝ որ կրնան կատարելապէս տեսանելի ըլլալ զօրծածական գործիքներով եւ երբ այսպէս տարբերութիւններ երեւին՝ որ դիտողութեան սխալանաց հետ անհամաձայն կը թուին, հաւանականութիւնը կը հակի ի նպաստ նշանակեալ փոփոխութեանց իրականութեան:

Դեռ անցեալ 1882 տարւոյ յունուար եւ փետրուար ամսոց մէջ հաստատուեցաւ թէ քանի մը հարիւր հազար քառակուսի հազարամէթր մակերեւոյթներ աղօտացած են, մինչդեռ ուրիշ տեղեր ալ աղօտ եւ մթին գաւառներ լուսաւորուած են: Այս փոփոխութեանց պատճառը փնտելով մարդս կրնայ ենթադրել ջրոց եւ բուսականութեան մէջ փոփոխութիւն մը՝ որ տեղի ունեցած ըլլայ եղանակներով եւ արագապէս ընդարձակութիւն ընդարձակ տարածութեանց վրայ: Առաջին պատճառն աւելի հաւանական կը թուի. առաջին, վասն զի ծովուց մօտ տեւերը, նոյն խոկ ծովուց մէջ կ'երեւին այս փոփոխութիւնը: Երկրորդ, վասն զի այս փոփոխական ծոցերուն եւ ջրանցքներուն գոյնը ծովուց գոյնին կը նմանի: Երրորդ, վասն զի ցամաք երկիրներու մէջէն անցնող ջրանցքները միշտ երկու կողմէն եւ երկու ծայրերէն հաղորդակցութիւն ունին ծովուց հետ: Երբ բուսական պատճառ մը ենթադրենք, աստիճանաբար պէտք է ընդունինք թէ Հրատին աղօտ բիծերը ծովեր չ'են այլ անտառներ կամ մարգագետիններ, որ շատ նուազ հաւանական է:

Ինչպէս կրնայ ըլլալ որ այսպիսի ողողմունք եւ այսպիսի ցամաքութիւնք տեղի ունենան: Երբ ենթադրելու ըլլանք գետնի մակերեւոյթին բարձրացումն եւ ստորնութիւնը, ինչպէս որ կը պատահի Միջերկրականի եզերաց վրայ, մասնաւորապէս Բուցցօլ կոչուած տեղը, (ուր Սերաբիոյ մեհեանը կ'երեւի երբեմն ծովուն մակերեւոյթէն վեր, երբեմն վար), այս ենթադրութիւնս մեզ ծայրայեղ կը թուի: Հետեւապէս ջրոց քանակութեան մէջ պէտք է որուն եւ փոփոխութիւնները: Բայց այս քանակութիւնն ինչպէս կրնայ փոփոխիլ. անշուշտ գետնին սաւելովը, ձիւներուն հալելովն եւ անձրեւներով: Արդ Հրատի վրայ շատ անգամ տեսնուած է ձիւնով ծածկուած ընդարձակ գաւառներ: Միւս կողմանէ կան որոշեալ ժամանակներ որ այս ձիւներս բոլորովին կ'անհետանան:

Ջուրին ձեւափոխութեանց եղանակն այս մոլորակիս վրայ մի եւ նոյնն ըլլալ կը թուի ինչպէս մեր մոլորակին վրայ՝ հաւանական է միայն թէ փոփոխութիւնք աւելի կարեւոր են անդ քան թէ հոս. թէ ծովերն աւելի նուազ ջուր ունին եւ բաղդատաբար մեծ փոփոխութիւններ կը կրեն. թէ ծովեզերք տափարակ են եւ մէկ քանի գաւառաց մէջ դաշտերը ծովուն հետ հարթ հաւասար են:

Այս փոփոխութիւններս չ'ենք կրնար ընծայել տեղատուութեանց եւ մակընթացութեանց. վասն զի թէպէտ եւ երկու արբանեակներ կան զանոնք առաջ բերելու համար, մէկը պտտնալով եօթն ժամու եւ երեսուն եւ հինգ վայրկենի մէջ, եւ միւսը՝ երեսուն ժամու եւ տասն եւ ութ վայրկենի մէջ, այս երկու արբանեակները շատ տկար զանգուած մը ունենալով չեն կրնար այդպիսի արդիւնքներ առաջ բերել. ասկից զատ այս արդիւնքներս չեն ներկայեր այս փոքրիկ արբանեակաց յարակից ո՛չ արագութիւն, ո՛չ պարբերականութիւն, այս արբանեակաց՝ որոց տրամագիծը Փարիզու տրամագիծէն աւելի չէ:

Խոկ գալով չողիացման, ամպերու կազմութեան եւ անոնց անձրեւի դառնալուն, կարծեմք ի դէպ է զիտել թէ դեռ չենք գիտեր թէ արդարեւ Հրատի ջուրը մեր ջուրին նման բացարձակապէս քիմիական

ջուր մըն է: Մենք չը պիտի հարցնենք Հայր Քրիստոսի հետ թէ արդեօք այդ ջուրը « մը-կըրտութեան կը յարմարի՞, եւ թէ գինին ալ կը պատշաճի պատարագի », թէպէտ եւ Հրատի մթնոլորտին մէջ երեւոյթական վեր-լուծութիւնն այնպիսի գիծեր ցոյց կուտայ, որ այս ջրոյն մեր ջուրին հետ նմանութիւն մը կ'ընծայեն. սակայն չենք գիտեր թէ մթնոլորտական ճնշումն եւ սովորական բարեխառնութիւնն աշխարհիս վրայի ճնշումն եւ բարեխառնութեանէն քիչ կամ շատ տարբերութիւն ունին, եւ թէ մթնոլորտը մեր շնչած մթնոլորտին նմանն է:

Ունինք բանաւոր պատճառներ ընդու-նելու թէ այս կէտիս վրայ իրական տարբերութիւններ կան այս մոլորակիս եւ մեր մոլորակին մէջ տեղը: Հրատին մէջի ծանրութեան սաստկութիւնն իրարմ վրայի ծանրութեան սաստկութեանէն երեսուն եւ եօթն հարիւրերորդէն աւելի անգին չ'անց-նիր: Մեր դրութեան ութը գլխաւոր աշխարհներէն ամենէն տկարն է: Մէկ հազարակրամ հող կամ ջուր այն տեղ կը կշռէ երեք հարիւր եօթանասուն կրամ: Թերմոսթէ-նոսթի պայմանները հոս եղածներէն աւելի տարբեր են հոն: Միւս կողմանէ այս գուն-տիս նիւթերը շատ նուազ խիտ են քան թէ երկրային նիւթերը. վասն զի իրենց խտու-թիւնը մեր նիւթոց խտութեան վաթսուն եւ ինն հարիւրերորդին հաւասար է. ասոր մէջ կայ թեթեւութեան վիճակ մը՝ որ կը կանոնաւորէ այս մոլորակիս մակերեւոյթին վրայ եղած մեքենական գործողութիւննե-րը, մեր աշխարհի օրէնքներէն տարբեր օ-րէնքներով:

(Գաֆէլ Ֆրանսէի) Թարգ. Գ. Գ. ԱՍԵՐԵԱՆ
(Մնացեալն յաջորդ Լեռնը)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՆՈՒԱԳ ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՍԱՆՈՒՅԵԱՑ

ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ,
ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ.

ՔԵՂԱՆԻ

Ա.

Տեսե՞ր երբէք դու մանկիկ
Այտից խընձորքըն գողտրիկ
Մինչ յորրանի կայ ի քուն
Քաղցրիկ երգոցն ի հնչիւն.
Վարդից թերթեր են շրթմունք
Որով ժըպտին զուարթունք.
Եւ երբ, անյագ մօրն ի սէր,
Բանայ խըփէ զիւր աչեր,
Զինչ գեղանի,
Զինչ սիրուն,
Քան ի քուն Ամեղութիւն:

Բ.

Տեսե՞ր երբէք պատանեակ
Ժիր ծնողաց ժիր որդեակ,
Որ զարթնու այգուն այգուն,
Տալ զանձըն յաշխատութիւն,
Ռարալս դէմք իւր զուարթ աշխունք,
Սիրելի են նրմա ուսմունք.
Եւ մինչ ի գործ զողջոյն տիւ
Մօր խինդ է եւ հօր սլափաւ,
Զինչ գեղանի,
Զինչ սիրուն,
Քան մանուկ յԱխատութիւն:

Գ.

Տեսե՞ր դու կոյս ծընդասէր
Իւր անուշիկ մօր պատկեր,
Սիրոյ ծնողացն ընդ փոխան
Տուեալ զանձըն ի խնամ տան.
Փոքունց՝ օրինակ բարի,
Պատիւ հայրենի հարկի.
Մինչ ի վարժըս միտքն են կիրթ,
Եւ Տեառն նուէր է իւր սիրտ,
Զինչ գեղանի,
Զինչ սիրուն,
Քան կուսին Համեստութիւն:

Յ. ՈՍԿԱՆ

Ո Ղ Բ

Ի ՎԵՐԱՅ ՈՒԼԱԽԱՅ ՆՐԿՐԻ ՀԱՅՆԵՐՈՒՆ
Ի ԹՈՒԱԹՅԻ ՄԻՆԱՍ ՍԱՐԿԱԽԱԳԵ ԱՍՏԵՍԱԼ

(Շար. նախորդ թուէն)

Դարձեալ կրկին հրաման հանեց,
Ամէն բաղաբ արմաշ զորկեց,
Ձգլուխ Հայերն զամէն բռնեց,
Ձեկեղեցիքն ամէն մոհրեց:

Ձերիցանին զվոյթըն ձենեց¹,
Ի յակամայ գիւրեանք կընքեց,
Լուսաւորչին հօտէն հանեց,
Մեծ հրամանաւ ապըսպըրեց:

Թէ զինչ հայ կայ թող մըկրտին,
Կանայք եւ աղջկունք ի միասին,
Թող Հայ չ'կենայ ի մեր երկրին,
Ամէն Հոռմի հաւատ լինին:

Ձեկեղեցի զինչ կար Հայի,
Խոթին՝ Սէրաթ՝ Եաշպազարի²,
Վասիլ՝ Պոթլան՝ Ոււմանի,
Ամենեքեան հիմն քակի:

Սաստիկ հրաման եհան կրկին,
Ձեկեղեցիքն աւերեցին,
Ձինչ անթ կայր կողոպտեցին,
ՁՀայոց գրեանքըն այրեցին:

Պոթլան քաղբին եկեղեցին,
Ոսկով պատկերք դրան միջին,
Շատ մալ խարչած³ վերայ նորին,
Յիշատակ էր Քրիստոստուրին:

Վոյվօտային աղաչեցին,
Հազար կարմիր տանք քեզ ասին,
Ըսկիհք, խաչեր եւ անթնին,
Մի՛ աւերել զեկեղեցին:

Պիղծ վոյվօտան նոցա ասաց,
Ձխնդիրք նոցա ոչ կատարեաց,
Անպատճառ քակել ասաց,
Թէ չէ՝ դիտոցդ էք դուք զրկած:

Քաղաք մի կայր Ոււմանի⁴,
Ինքն փոքրիկ բարեօք ի լի,

Շատ Հայ աղք կայր ի յայն տեղի,
Խիստ տոլլթորք եւ անուանի:

Երէց մի կայր իւրեանց միջի,
Եւ Հատ Գանձով բարէալի,
Հեզ եւ հանդարտ ամենայնի,
Հիւրամեծար էր աշխարհի:

Տարին յատեան զնա կացուցին,
Ասեն թէ մո'ւտ հաւատ Հոռմի,
Թէ չէ՝ տանջենք անհընարին,
Բանտ ի մահ աղջամըղին:

Տէր Խաչատուր քաջ եւ արին,
Պատասխանեց ի դէմ նոցին,
Չեմ ուրանայ գէտատա հին,
Ձգաւանութիւն Լուսաւորչին:

Ի Մինթանայ⁵ երկրէն ելայ,
Հաւաքի համար պանդխտեցայ,
Ըզ իմ հաւատն ո'չ ուրացայ,
Ի յայտ երկիրս բնակեցայ:

Եւ այլ բաղում բաներ ասաց,
Թէ ձեր հաւատն ու դուք կորած,
Ամէն աղքի աչից ելած,
Ուլախաց աղք հոտած նխած:

Պատասխանեց Հար վոյվօտան,
Մո' հայ երէց ամբարտաւան,
Դարձիր օրէնք քաղկեդոնեան,
Որ չի տանջեմք զբեզ յաւիտեան:

Դարձեալ հրաման ետ ծինկանին⁶,
ՁՏէր Խաչատուրն ու տանջեն,
Ձձեռն եւ զոտն կապեցին,
Եւ գերկու աչքըն փորեցին:

Կրկին ասաց թէ ուրացիր,
ՁԼուսաւորչի հաւատն ընտիր,
Թէ չէ՝ զգլուխդ կորուսիր,
Ձդուստրդ և զորդիքդ խեղճ արիր:

Արմաշներուն ասաց գնացէք,
Ձգուստրն եւ զորդիք ջարդեցէք,
Ձտուն եւ զտեղն թալնեցէք,
Յետոյ զերէցն կնքեցէք:

Երբոր էկան պիղծ արմաշներ,
Կինն եւ տղաքըն ճիշ բարձին,

Լալով անկան յոտս ծնողին ,
Ազաչելով կողկողագին :

Արա՛ զկամք թագաւորին ,
Եւ մըկրտիր հաւատ չոռմին ,
Թէ անմեղ գառինք քոյին ,
Սրոյ ճարակ առւիր դահճին :

Մնողական գութն չարժեցաւ ,
Եւ իւր տղոցն ողորմեցաւ ,
Եւ յակամայ մկրտեցաւ ,
Եւ Ուլախի հաւատ մտաւ :

Ի յայս վերջի ժամանակի ,
Հայոց ազգս կայ վըտանգի ,
Եւ տարազիր ի յաշխարհի ,
Սյս Ուլախաց փոքրիկ երկրի :

Վայ եւ եղուկ հազար բերան ,
Հառաչեցէք (միաբերան) ամենեքեան ,
Սյս Ուլախի Հայերս որ կան ,
Ի հաւատոցն զըրկեցան :

Եկեղեցիքն քակտեցան ,
Սյն սուրբ տաճարքն անտես եղան ,
Ազնիւ դրեանք հուր այրեցան ,
Յանկ սլաշտամանցն վերացան :

Խիստ գեղեցիկ անօթք կային ,
Խաչ եւ սկիհ եւ չուրջառնին ,
Աղէկ մարդկանց յիշատակնին ,
Բաժին եղաւ Ուլախ ազգին :

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ
(Շաբուհապետ)

¹ Զայնեց , գոչեց : ² Այժմեան Եաշ քաղաքն է .
ողջա ամէնքն ալ Հայարնակ քաղաքներ են : ³ Ծախ-
սած : ⁴ Որ է Ռոման քաղաքն : ⁵ Մոլտավիդ անունն
է Մունթէն (լեւն) , եւ այս բառն ալ Մունթէնայ
լսել է : ⁶ « Զինկեանէ » , գնչու :

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻ

Թիի	21.	(Մասիս Թիւ	3814)
»	39.	»	3832)
»	40.	»	3834)
»	41.	»	3835)
»	42.	»	3835)
»	43.	»	3835)

ԽՆԴԻՐ

Թիի 44.

Օրիորդ մը իւր հօր բալթօն հազնելով 8 լիպրա
աւելի կը կշռէ քան իւր մօր 3½ ը : Թէ որ բալթօն
օրիորդին ուսերէն մօրը ուսերուն վրայ անցնի , սա
իւր աղջկան կրկինը կը կշռէ : Ո՞րքան կը կշռեն մայր
եւ աղջիկ զատ զատ եւ ո՞րքան հօրը բալթօն , գիտ-
նալով որ երկուսին դուստրն հաւասար է բալթօնին
ծանրութեան քառակուսւոյն :

ԽՆԴԻՐ ԹԻԻ 38

ԼՈՒԾՈՒՄՆ

+ կոչենք քրոջը գործածած ժապաւէնի
կանգուններուն թիւն . մէկ կանգունին զիւ-
նը կ'ըլլայ $\frac{192}{+}$, իսկ թէ որ բարեկամուհին
նոյն գնով 8 կանգուն աւելի գնած է , մէկ
կանգունին համար վճարած է ուրեմն $\frac{192}{++8}$:
Արդ , ըստ յառաջադրութեան խնդրոյն , այս
երկու գնոց մէջ 2 Փրանքի տարբերութիւն
մը կայ :
Ուրեմն .

$$\frac{192}{+} - \frac{192}{++8} = 2$$

յորմէ + = 24 :

ՊԱՏ. — 24 կանգուն ժապաւէն գործա-
ծած էր :

ԱՆՈՒԱՆՔԻ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Ս. Պետրոսեան , Կիրասօն
Տ. Մ. Սարրաֆեան Սչաի. Պէրպէր.
եան վրժրնի.
Տ. Երուանդ Իւթիւճեան , Կ. Պոլիս

ՊՈԻԼԿԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Շնորհիւ պուլկար ժողովրդեան եւ բանակին հաւատարմական զոացմանց, Ալեքսանդր իշխանը Տարակդատ չը հասած, վերադարձած է իւր երկիրն եւ այս պահուստ ֆիլիպէէն կ'ուզեւորի ի Սոֆիա, ամենուրեք եռանդալին ընդունելութիւն գտնելով իւր ճանքու վրայ:

Աւստի վերջին սուրհանդակով այս մասին առնուած հեռագրական ծանօթութիւնք:

ԲԱՐԻՁ, 29 օգոստ.

Ալեքսանդր իշխան Սոֆիա կը վերադառնայ հակառակ իւր հօր և Պիզմարք իշխանին խրատներուն:

— Ալեքսանդր իշխանն առաւօտեան ժամ 4 ին Ռուսճուգէն մեկնեցաւ իւր զբօսանաւով եւ ժամ 8 ին Սիսդովա հասաւ: Քաղաքին բոլոր ժողովուրդը խնուած էր քարափին և չըջակայ բլրակաց վրայ:

Իշխանն յաղթանակէ յաղթանակ կ'ընթանայ:

Սիսդովայի մէջ ժողովրդեան խանդավառութիւնն աւելի մեծ եղաւ քան ի Ռուսճուգ: Ժողովուրդը լծէ արծակեց իշխանին կառքին ձիերն և Ն. Բարձրութիւնն յաղթանակաւ տարաւ մինչեւ եկեղեցին, ուր օրհնաբանական աղօթք մը երգուեցաւ:

Իշխանը ժամէ մը Դրնովա պիտի մեկնի:

ԵՖՆԻ-ՉԱՂՐԱ, 1 սեպտ.

— Պալքանաց մէջ տասն և մէկ ժամ ուղեւորութենէ յետոյ, ԵՖՆԻ-Չաղրա հասանք. ֆիլիպէէն եկած պատգամաւորութիւն մը Ալեքսանդր իշխանին կ'սպասէր ի ստորոտս Պալքանաց:

ՓԻԼԻՊԷ, 2 սեպտ.

— Այս առաւօտ ժամ 8 ին ֆիլիպէ հասանք, ընդհանուր խանդավառութեան մը մէջտեղ որ Ռուսճուգէն մեկնելէս ի վեր դադրած է. բոլոր ճամբուն վրայ (գիշերը), ԵՖՆԻ-Պաղարէն ի ֆիլիպէ, ժողովուրդն ամեն կայարանները վազած էր՝ տօնելու համար Պուլկարիոյ իշխանին վերադարձը: ամէնուրեք, ժողովուրդն և բանակն հաւատեցին իրենց անձնուիրութիւնն առ իշխանն:

Փիլիպէ, 2 սեպտ.

Ալեքսանդր իշխանն այս երեկոյ ժամ 5 ին (երէկ իրիկուն) ֆիլիպէէ ճամբայ ելաւ Սոֆիա երթալու համար:

Փիլիպէ, 2 սեպտ.

Պ. Սդամպուլով զոր տեսայ, ըսաւ ինձ. «Միակ պատճառն որով օտար միջամտութիւն մը կրնայ տեղի ունենալ ի Պուլկարիա՝ քաղաքային պատենագով է. ուստի կ'ուզենք քաղաքային պատերազմի առաջըն առնուլ: Քաղաքային պատերազմ կը ծագի այն ատեն միայն երբ չափազանց խստութիւն ցուցնենք օգոստ. 21 ի յեղափոխութեան հեղինակաց: Ուստի, իշխանն հաստատապէս որոշած է կատարեալ ներում շնորհել անոնց: Արդէն, Պ. Պ. Քարավէլով, Չանքով, Պուրմով և այլք, զորս Մուդրուրով գնդապետը ձերբակալած էր, արձակեցան իշխանին հրամանաւ:»

— Իշխանն այս երեկոյ ֆիլիպէէ կը մեկնի Սոֆիա երթալու համար:

Վառնա, 1 սեպտ.

Ալեքսանդր իշխանին Պուլկարիա վերադառնալուն առթիւ, Վառնա կիրակի իրիկուն դրօշներով զարդարեցաւ և ընդհանուր լուսավառութիւն եղաւ:

Վառնայի ժողովուրդն հանդարտ է: Բայց զինուորական տարրը շարժման մէջ է: Ամեն օր զինավարժութիւն կը կատարեն քաղաքապահ զօրքերն, որոց տեղ քաղաքին սահպահութիւնն յանձնուած է մերձակայ 500 գիւղացւոց:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ազն. Սրբուհի Տիւսաբ բաշա աւարտած է նոր վէպ մը, ԱՐԱՔՍԻՍ, կամ ՎԱՐԺՈՒՀԻՆ՝ զոր պիտի հրատարակէ նորահաստա Բիւզանդեան գրատունը: Մայրի հեղինակին սոյն նոր գործն անտարակոյս ջերմ ընդունելութեան պիտի արժանանայ:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԻՐԱԳՐՈՅ